ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

IX դասարան

Ընդունելության թեստը բաղկացած է 10 առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր (ընդամենը՝ 50 միավոր):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 60 րոպե:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. *Լրացնել բաց թողած տառերը.*

Հոգ__արք, սաղար__, մելամա__ձոտ, թխվա__ք, վաղն__ական, որովհետ__, զա__իթափ, աղ__ան, ճրա__ակալ, ա__բաստանել:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Արտագրել այն բառերը, որոնք գրվում են մեծատառով.

ՍՊԻՏԱԿ ԾՈՎ, ՊԻՐԵՆԵՅԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ, ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐ, ԱՐԱՔՍ ԳԵՏ, ԱՇՈՏ ԵՐՐՈՐԴ, ՄԱՇՏՈՑԻ ՊՈՂՈՏԱ, ԼԱՋԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ, ԱՐԱԳԱԾ ԼԵՌ:

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Սյունակներից ընտրել մեկական արմատ (դեմ դիմաց գրված) ու ածանց և կազմել հինգ բարդ ածանցավոր բառ.

Ողբանվագ-օրհներգ	իկ
բարձրաձայն-աշխարհազոր	ույթ
սառցալեռ – անցուդարձ	ակ
հրազեն-հոմանիշ	ք
բազմաշնորհ-բնանկար	ան

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Համապատասխանեցնել դարձվածքները և դրանց իմաստները.

ա/ լեղին ջուր կտրել	1. հանգստանալ
բ/ շունչ քաշել	2. վախենալ

գ/ կանաչ-կարմիրը կապել 3. խեղճ, անճարակ մարդ
դ/ անձյուն ձմեռ 4. տղային ամուսնացնել
ե/ կողի ընկնել 5. համառել

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Դուրս գրել գոյականները.
Ե՛վ հայոց մեր շարժուձևը, որն այնքան բան է ասում, և՛ ծնկներին խփելն ու պայթյուն ծիծաղը, և՛ հայերեն բառը, նայվածքը, ժպիտը, զորավոր միտքը զարմանալի այս ցեղի հառնումն են ցուցադրում:
_____
_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. Կազմել տրված գոյականների հոգնակին.
նախատիպ _____
փոստատար _____
դուստր_____
սպա_____
ծոռ_____
մանկագիր _____
պատշար _____
մեծատուն _____
դեղատուն_____
զրահակիր_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. Որոշել նշված բայերի *եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը, սեռը.*
սիրում է _____
պիտի հաղթի_____
կտոնենք _____
հեռացի՛ր _____
գրկեի_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Ընդգծել կապերը.

ա/ Առանց կրակ ծուխ չի լինի:

բ/Բարեկամը փորձանքի մեջ է ճանաչվում:

գ/ Գիտունի հետ քար քաշի, անգետի հետ փլավ մի ուտի:

դ/ Հիմարություն է աղքատ ապրել հարուստ մեռնելու համար:

ե/ Սարը շատ բարձր է, բայց ոչ ոք նրա առաջ գլխարկ չի հանում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Կատարել շարահյուսական վերլուծություն.

ա/ ընդգծել բուն բացահայտիչը.

Շահանդուխտը՝ Գառնո գեղանի բերդակալուհին, դիտանոցից արդեն նշմարել էր ուրախության դրոշը:

բ/ ընդգծել որոշիչը.

Գարնանը տաքանում են Օրանջիայի քարերը՝ մոխրագույն, կապույտ, հազարերանգ:

գ/ ընդգծել բաղադրյալ ստորոգյալը.

Տարոնի՝ միայն այդ հարթավայրին բնորոշ ջինջ առավոտներից մեկն էր:

դ/ ընդգծել հատկացուցիչը.

Թռչունը կտուցով ծակեց ծառի՝ հարյուրամյակների ընթացքում կոշտացած կեղևը՝ նրա տակ միջատներ գտնելու հույսով:

ե/ ընդգծել ուղիղ խնդիրը.

Դալիլան կտրում է տղայի մազերը, ապա արծաթի փայլով կուրացած՝ հանձնում թշնամուն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Կազմել նախադասություն՝ չխախտելով տրված բառերի շարադասությունը:

ա/ Կրկես, հրապարակ, դուռ, բացել, և, դուրս գալ, պարթևահասակ, վայելչադեմ, մի, մարդ:

բ/ Այդ, անհեթեթ, աշխատանք, ես, հոգի, քայքայել, և, ջղագրգիռ, վիճակ, մեջ, գցել, ես:

գ/ Խառնիճաղանջ, միտք, բզկտել, նա, կարեվեր, խոցվել, հոգի:

դ/ Դողդոջուն, և, անհաստատ, քայլեր, նա, մտնել, իշխանուհի, շքեղ, կահավորվել, սենյակ:

ե/ Նա, ես, թոցնել, ձի, թամբ, և, հապճեպ, ճամփա, ընկնել:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____